ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Խաղաղության խորհրդի կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Կառավարության դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի մայիսի 5-ին:

Սահմանադրական դատարանի 2026 թվականի մայիսի 20-ի ՍԴԱՈ-87 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Վարդանյանը, և դատաքննությունը նշանակվել է 2026 թվականի հուլիսի 7-ին:

2. Գործը դատաքննության նախապատրաստելու շրջանակներում ի հայտ են եկել նշված կանոնադրության հայերեն պաշտոնական թարգմանության և բնօրինակի (անգլերեն) միջև թարգմանչական և բովանդակային որոշ առերևույթ անհամապատասխանություններ: Գործով զեկուցողի կողմից Սահմանադրական դատարանում Կառավարության ներկայացուցչին է ուղարկվել գրություն՝ հնարավորինս սեղմ ժամկետում Սահմանադրական դատարանին Կանոնադրության ամբողջական և ճշգրիտ պաշտոնական թարգմանության տեքստը ներկայացնելու վերաբերյալ:

3. Հաշվի առնելով գործով զեկուցողի առաջարկությունն առ այն, որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ գործի վարույթը կասեցնելու հիմք, մասնավորապես՝ Կառավարության ներկայացուցչի կողմից ներկայացված նոր նյութերն ստացվել են դատաքննության նախորդ օրը, դրանց պատշաճ և լիարժեք ուսումնասիրության համար անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Խաղաղության խորհրդի կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնել՝ մինչև կասեցման հիմքը վերանալը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

7 հուլիսի 2026 թվականի
ՍԴԱՈ-159